ԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱՆՑՆԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի ներկա փուլում էլ գործում են նրա զարգացման հիմնական օրինաչափությունները: Վերջին մեկուկես տասնամյակի նրա վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառագիտության, մանավանդ ածանցման ասպարեզում էլ ի հայտ են եկել նոր իրողություններ, նորակազմություններ, որոնց բնութագրումը դարձել է գիտական հրատապ խնդիր:

Հենվելով հայ լեզվաբանական մտքի նվաճումների և վերջին տարիներին առավել շատ ընթերցվող թերթերում ածանցավոր նորակազմ բառերի՝ մեր ուսումնասիրության վրա՝ ջանացել ենք բացահայտել արդի հայերենում գիտակցվող և չգիտակցվող նախածանցների ու վերջածանցների՝ տարբեր խոսքիմասային հիմքերի հետ կապակցելիության, ինչպես և նրանց հաճախականության նորագույն օրինաչափությունները:

Մեր լեզվաբանական միտքը ցայսօր կենտրոնացած է եղել ածանցների հոմանշության ուսումնասիրման վրա[1], մինչդեռ նույնպիսի ուշադրության արժանի են նաև ածանցների բազմիմաստության և համանունության խնդիրները, որոնց բնութագրման փորձ է սույն հոդվածը:

Ածանցների ձևաիմաստային հարաբերությունները ունեն հոմանշության, հականշության, համանունության և բազմիմաստության բնութագրեր: Քանի որ այդ բնութագրերը հատուկ են լեզվի բոլոր մակարդակների միավորներին, ապա ընդհանուր առմամբ ածանցների վրա էլ տարածվում են նույն չափանիշները, որոնք կիրառվում են բառերի նկատմամբ: Սակայն այդ ընդհանուր չափանիշները ածանցների նկատմամբ կիրառելիս հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները:[2]

1. Ածանցների տարբեր մասնավոր իմաստները շատ հաճախ պայմանավորված են լինում բաղադրական հիմքով. այսպես՝ *-իկ* ածանցն արտահայտում

---

[1] Այս բնագավառում մեծ է, հատկապես, պրոֆ. Ս. Գալստյանի վաստակը, որի՝ հայերենի ածանցներին ու ածանցմանը նվիրված ծանրակշիռ ուսումնասիրությունները առավել ամբողջական են և ուղենշային:

[2] Տես Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր.1984, էջ 287:

է փոքրության իմաստ և պետք է ցույց տա բաղադրական հիմքով արտահայտվող գոյականի փոքր լինելը, ինչպես՝ *թմբիկ* «փոքր թումբ», *թերթիկ* «փոքր թերթ», *սալիկ* «փոքր սալ» և այլն: Սակայն փոքրությունը կարող է որակվել դրական, հաճելի, բայց նաև՝ արհամարհելի հատկություն:

2. Բոլոր ածանցներն ունեն խոսքիմասային քերականական իմաստ և այդ տեսակետից հոմանիշներ են գոյականակերտ ածանցները միմյանց նկատմամբ, ածականակերտ ածանցները՝ միմյանց նկատմամբ և այլն: Հասկանալի է, որ ածանցական իմաստների նույնությունը կամ մերձավորությունը որոշելու համար խոսքիմասային քերականական իմաստները չպետք է հաշվի առնել, մինչդեռ համանունության ու բազմիմաստության համար դա առաջնահերթ նշանակություն ունի:

3. Ածանցումները ենթակա են իմաստային զարգացման, իսկ դրա հետևանքով կարող են տարբեր լինել: Հնարավոր է, որ պատմական փոփոխություններով միևնույն ածանցը երկու տարբեր ածանցումների մեջ բոլորովին տարբեր ածանցական իմաստներ արտահայտի, և, ընդհակառակը, երկու տարբեր ածանցներ միևնույն ածանցական իմաստը ձեռք բերեն: Օրինակ՝ *-ական* և *-ային* նույնանիշ ածանցներ են, բայց *կուսակցական* նշանակում է «կուսակցության անդամ», իսկ *կուսակցային* «կուսակիցներին՝ կողմնակիցներին հատուկ»:

Այս հիմնական առանձնահատկություններին կարող են ավելացվել նաև մասնավոր յուրահատկություններ, որոնք վերաբերում են ածանցների այս կամ այն խմբին կամ զույգին, սակայն դրանց չենք անդրադառնա:

Միևնույն հնչյունական կառուցվածք կամ միևնույն ձև ունեցող ածանցների մի մասը թե՛ ծագումնաբանորեն, թե՛ իրենց արտահայտած ձևական իմաստներով ոչ մի ընդհանրություն չունեն, և դրանք բոլորովին տարբեր ածանցներ են: Միևնույն հնչյունական պատկերն ունեցող, բայց տարբեր նշանակությամբ ածանցները նույնանուն ածանցներ են: Համանուն ածանցները բազմիմաստ ածանցների հետ ունեն որոշակի ընդհանրություններ. միևնույն ածանցը արտահայտում է մի քանի բառակազմական իմաստ: Բազմիմաստ ածանցների իմաստային տարբերակները, սակայն, իմաստով կապված են միմյանց հետ, ինչպես նաև միևնույն ածանցի դրսևորումներն են և ծագումնաբանորեն ընդհանուր են: Համանուն ածանցների դեպքում միևնույն հնչյունական ձևի մակարդակում արտահայտվում են միանգամայն տարբեր բառակազմական իմաստներ, որոնք առաջանում են և՛ միևնույն ծագում ունեցող ածանցների իմաստների առանձնացումից, և՛ տարբեր ծագում ունեցող ածանցների հնչյունակազմերի պատահական զուգադիպություններից: Այսպես՝

-ացի ածանցն ունի բառակազմական տարբեր նշանակություններ: Մի դեպքում այն ունի «որևէ տեղից», «որևէ տեղի բնակիչ» նշանակություն, ինչպես՝ *քաղաքացի, գյուղացի, իտալացի* և այլն, մյուս դեպքում արտահայտում է հատկանիշային իմաստ, որով գոյականներից կազմվել են ածականներ և մակբայներ, ինչպես՝ *բառացի, տողացի, փաստացի* և այլն:

-Ին ածանցը հիմնականում երկու ածանցական իմաստ է արտահայտում.

ա/ այն մի շարք ածականներից սաստկական իմաստով ածականներ է կազմում. օր.՝ *լռին մթին, նրբին, խորին* և այլն:

բ/ տեղի իմաստ ունեցող բառերից ու արմատներից այն կազմում է տեղային հատկանիշ արտահայտող բառեր. օր.՝ *ներքին, արտաքին, միջին, վերջին* և այլն:

Աշակերտություն - գյուղացիություն, խիզախություն - գեղեցկություն, հմայություն - զննություն ածանցումներից առաջին զույգում *- ություն* ածանցը ցույց է տալիս հավաքականություն, երկրորդում՝ առարկայացած հատկություն, երրորդում՝ գործողություն. տարբեր իմաստներ պայմանավորված են բաղադրական հիմքով (առաջինները՝ գոյական, երկրորդները՝ ածական, երրորդները՝ բայահիմք). ուրեմն *–ություն* ածանցը կարող ենք համարել բազմիմաստ:

Բազմիմաստ ածանցներից են՝ *-ակ, -ական, -ան, -ի, -ուտ, -ոն* և այլն:

-Անոց/նոց ածանցն ունենք *հիվանդանոց, արվեստանոց, դարբնոց, հյուսնոց-գլխանոց, թիկնոց, թևնոց, տասանոց, մետրանոց, փթանոց, կոպեկանոց* ածանցումների մեջ. առաջին չորս օրինակներում *-անոց - նոց* ածանցի իմաստն է «որևէ բանով զբաղվելու, որևէ կարգի մարդկանց հատկացված, որևէ բանով բնութագրվող տեղ», երկրորդ խմբում՝«մարմնի որևէ մասը ծածկելու շոր», երրորդ խմբում՝ «որևէ կարգի միավոր պարունակող»: Առաջին երկու խմբում ածանցը գոյականներից կազմում է գոյականներ, երրորդում՝ գոյականներից ածականներ և փոխանվանաբար՝ գոյականներ. խոսքիմասային քերականական տարբերությունը բավական է, որ *արվեստանոց* և *մետրանոց* ածանցումների ածանցները համարենք տարբեր ձևույթներ, որոնք ձևապես նույնական են. նշանակում է՝ այդ ածանցները համանուններ են: Առաջին երկու խմբի ածանցումները հավասարապես գոյականներ են, ուստի և խոսքիմասային իմաստի հակադրություն չկա, բայց դրանց միջև կա իմաստային բացահայտ հակադրություն. առաջին շարքի բառերը ցույց են տալիս որևէ բանի հատկացված տեղ, որևէ բանով բնորոշվող տեղ, երկրորդ շարքի բառերը՝ զգեստ կամ զգեստի մաս, որևէ բանի ծառայող շոր. իմաստներն այնքան տարբեր են, որ հնարավոր չէ նույն ածանցը համարել, ուստի և համանուններ են:

Ան- նախածանցով բառերի մի մասն ունի ժխտական նշանակություն, ինչպես՝ *անօգուտ, անգետ, անբան, անտուն* և այլն: Բայց այս նախածանցը, բացի ժխտական իմաստից, արտահայտում է նաև «վրա» ածանցային նշանակություն: Այդպիսի բառերից են՝ *անձեռոցիկ, անկողին* և այլն:

Դիտարկենք հետևյալ ածանցումները.

ա. *ծիրանենի, բալենի, մասրենի, թզենի, նոնենի, թթենի* և

բ. *գառնենի, այծենի, վագրենի, ընձենի, հորթենի*.

Առաջին խմբում - *ենի* ածանցը կազմում է բուսանուններ՝ պտուղների անուններից, երկրորդ խմբում կենդանիների անուններից կազմում է դրանց մորթը կամ միսը նշանակող գոյականներ. առաջին շարքում ածանցը կերտում է գոյականներ, որոնցից ծագում, ստացվում է ածանցման հիմքի ցույց տված գոյականը, այսինքն՝ ածանցումով կազմվում է ստացվող՝ ծագող արդյունքի աղբյուրը՝ ծնողը ցույց տվող գոյականը, պտղի անվանումից՝ բույսի անվանումը, երկրորդ շարքում՝ գոյականներ, որոնք ստացվում են ածանցման հիմքի ցույց տված գոյականներից, այլ կերպ ասած՝ առաջին շարքի ածանցումները ցույց են տալիս աղբյուրը, երկրորդները՝ արդյունքը, մթերքը. իմաստները չեն կարող նույնացվել, ուստի և համանուններ են:

Նույն - *ենի* ածանցն ունենք *լոբենի, հայրենի, մայրենի, նազենի, նրբենի, քաղքենի, քնքշենի* և այլ բառերում, որոնք ածականներ են. այդ բառերի մեջ - *ենի* ածանցը նշանակում է «մեկին, մի բանի հատուկ», *նազենի* «նազին՝ նազանքին հատուկ, նազանք պարունակող», *նրբենի* «նուրբին հատուկ», *մայրենի* «մորը հատուկ՝ պատկանող» և այլն: Եթե այս ածանցը համեմատենք *գառնենի, ընձենի* և նման ածանցումների - *ենի* ածանցի հետ, ապա կհամոզվել, որ դրանք նույն ածանցներն են, քանի որ դրանք էլ նշանակում են «գառանը հատուկ՝ պատկանող», «ինձին հատուկ՝ պատկանող» և այլն: Նշանակում է՝ *արծվենի, գառնենի մայրենի, քնքշենի* ածանցումներում ունենք նույն ածանցը, որ կենդանիների անուններից կազմում է ածականներ, իսկ երկրորդաբար՝ գոյականներ:

-կոտ հնչյունախմբով ժամանակակից հայերենում գործածական են երկու ածանցներ՝ բայական բազմապատկական *-կոտ* ածանցը (օր.՝ թռչկոտել) և ածականակերտ *–կոտ* ածանցը, որն ունի «սկզբնաձևի նշած հատկությամբ օժտված» բառակազմական նշանակությունը (օր.՝ ամաչկոտ, վախկոտ և այլն):

Ածանցների համանունությունը և բազմիմաստությունը որոշելու համար պետք է ընդունել հետևյալ չափանիշները.

1. եթե ձևապես նույնական ածանցները կազմում են երկու տարբեր հարացույցներ, ինչպես՝ *-անոց, -նոց* ածանցները *դարբնոց* և *թիկնոց* ածան-

ցումներում.

2. եթե միևնույն խոսքի մասին են պատկանում, բայց որոշակիորեն տարբեր և նույնիսկ հակադիր իմաստներ ունեն, ինչպես՝ *-ենի* ածանցը *գառնենի* և *թզենի* ածանցումներում, ապա դրանք համանուններ են.

3. եթե միևնույն հարացույցին պատկանող ձևով նույնական ածանցները տարբեր հիմքերից կազմվող ածանցումներում տարբեր ածանցական իմաստներ են ստանում, ապա ունենք բազմիմաստ ածանց, ինչպես՝ *-ուկ* ածանցը *խղճուկ, հորթուկ, ծագուկ* և *մարդուկ* ածանցներում և այլն.

4. եթե ձևապես նույնական ածանցները տարբեր ծագում ունեն. ինչպես՝ ըստ ակադ. Գ. Ջահուկյանի՝ *-ան* 1 (գլան, դեղձան) և *-ան* 2 (արժան, իշխան, պատվիրան), *-ան* (իշանք, ծիանք)և այլն[3]:

«Ժամանակակից հայերենի վերջածանցների համաժամանակյա դասակարգման մի քանի հարցեր» հոդվածում զետեղած աղյուսակում[4] պրոֆ. Ս. Գալստյանը ժամանակակից հայերենի ածանցները բաշխել է ըստ բառակազմական կաղապարների: Ստորև ներկայացնում ենք այդ աղյուսակը.

	ա 1	ա 2	ա 3
Գ	1.Գա 1: ա / բան, ա / գործ, ակ, ա / նոր, անք, ա / պան, ա / ստան, արան, արար, ացի // եցի // ցի, ացու, երեն, արեն, ի, իկ, յակ, որդ, ոց, ություն, ուկ, ուհի, ույթ, ունի, ունք, ուտ, ք:	2. Գա 2: ա / գին, ական, ային, ավետ, ա / վոր, ատ, արար, ացի // եցի, ացու, ե, եղ, եղեն, երեն // արեն, ի, յա, յան, ոտ, ուտ:	3. Գա 3: ա / բար, ապես, ավարի, ովին, երեն, որեն:
Բ	4. Բա1: ած, ած / ո, ած / ու,, ակ, ան, ա / նոց, անք, արան, արար, եք, իկ, իչ, իք, կան, մունք, յուն, ող, ոն, ովի, որդ, ոց, ոցի, ված, վածք, ություն, ուկ, ում, ունք, ույթ, ուրդ, ուք, ք:	5. Բա 2: ա / գին, ական, ան, ավոր, արար, եղեն, ի, իկ, իչ, իք, կան, կոտ,, ման, ած/ ո, ող, ոտ, ու, ուկ, ուն, ունի, ուտ:	6. Բա 2:
Ա	7. Աա1: ակ, արար, ություն, ուհի, ույթ, ուտ, ք:	8. Աա 2: ա / գին, ա/ գույն, ակ, ական, ակի, անոց, ավետ, ավոր, ավուն, արար, որդ / երորդ, ի, իկ, յա, ոտ, որդ, ուկ:	9. Աա 3: աբար, ակի, ապես, ովին, որեն:
Մ	Մա 1: (-ություն ածական – մակբայ հիմքերի հետ):	Մա 2: (ական):	12. Մա 3: (ակի, ապես)

[3] .Ջահուկյան Գ.,Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր., 1998, էջ 11-12:

[4] Տես Գալստյան Ս., նշվ. աշխ., «Բանբեր Երևանի համալս.», Եր., 1997, N 2, էջ 77 - 82:

Բերված աղյուսակում ածանցների հոմանշությունն արտահայտվում է ուղղաձիգ շարքերով, որովհետև հոմանիշ կարող են լինել նույն խոսքի մասերին պատկանող բառերը: Մենք նկատել ենք, սակայն, որ հիշյալ աղյուսակում ուղղաձիգ շարքերով տարբեր կաղապարների կազմությանը մասնակցող, *նույն նյութական արտահայտություն ունեցող ածանցները նույն, բայց միաժամանակ նաև բազմիմաստ ածանցներ են*, այսինքն՝ ունեն բառակազմական տարբեր նշանակություններ, ինչպես՝ Գա1 կաղապարի *–իկ* վերջածանցն ունի նվազափաղաքշական նշանակություն և գոյական հիմքերից կազմում է գոյականներ: Բա 1 կաղապարի *–իկ* ածանցն ունի «գործողի անուն» բառակազմական նշանակություն և կազմում է գոյականներ: Այսպիսով՝ *-իկ* ածանցն ունի բառակազմական երկու տարբեր նշանակություններ: Հորիզոնական շարքերում տարբեր կաղապարներում գործող (տարբեր խոսքի մասեր կազմող), բայց նույն նյութական արտահայտություն ունեցող ածանցները տարբեր և համանուն ածանցներ են: Այսինքն՝ համանուններ են՝ Գա 1 կաղապարի *-եղեն* (ոսկեղեն) և Գա 2 կաղապարի *-եղեն* /հողեղեն/ ածանցները:

Այսպիսով, համանուն ածանցները միևնույն հնչյունական կազմ, բայց բառա-կազմական տարբեր նշանակություն ունեցող երկրորդական ձևույթներ են: Համանուն ածանցները բազմիմաստ ածանցների հետ ունեն որոշակի ընդհանրություններ. միևնույն ածանցը արտահայտում է մի քանի բառակազմական իմաստ: Բազմիմաստ ածանցների իմաստային տարբերակները իմաստով կապված են միմյանց հետ, ինչպես նաև միևնույն ածանցի դրսևորումներն են և ծագումնաբանորեն ընդհանուր են: Համանուն ածանցները արտահայտում են միանգամայն տարբեր բառակազմական իմաստներ, որոնք առաջանում են և՛ միևնույն ծագում ունեցող ածանցների իմաստների առանձնացումից, և՛ տարբեր ծագում ունեցող ածանցների հնչյունակազմերի պատահական զուգադիպություններից: